ՀԱՄՔԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊՈԴՈԼՅԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐՈՒՄ

ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Արևմտյան Ուկրաինայի զգալի մասը կազմող Պոդոլյեում վաղ ժամանակներից ի վեր կազմակերպված հայկական գաղութների ներքին կյանքում զգալի դեր են խաղացել եղբայրությունները։ Հայրենի երկրից մեծ հեռավորության վրա գտնվող և օտար միջավայրում ապրող հայ գաղթականները միմյանց նյութական օգնություն ու բարոյական աջակցություն ցույց տալու, արհեստների մի շարք ճյուղերում արտադրություն կազմակերպելու և միավորված հանդես գալու, ինչպես և, ընդհանրապես, առօրյա կյանքի դժվարություններին դիմագրավելու համար ստեղծել էին կազմակերպություններ, որոնք հայտնի են եղբայրություններ ընդհանուր անվամբ։ Այդպես էին կոչվում թե՛ հոգևոր եղբայրությունները, թե՛ կտրիճվորաց, այսինքն՝ երիտասարդների կազմակերպությունները, և թե՛ արհեստագործական ընկերությունները՝ համքարությունները։

Մինչ այժմ հետազոտողների ուշադրության կենտրոնում եղել են գլխավորապես կտրիճվորաց եղբայրությունները, որոնց նվիրված են մի քանի հոդվածներ[1], հրատարակված է Յազլովեց քաղաքի հայ գաղութի կտրիճվորաց եղբայրության կանոնադրությունը[2], բայց մյուս եղբայրությունները, հատկապես արհեստավորական կազմակերպությունները, դեռևս ուսումնասիրված չեն։ Չնայած այն բանին, որ դեռևս 1830 և ապա 1869 թթ. նյութեր էին հրապարակվել այդ համքարությունների վերաբերյալ, բայց դրանք վրիպել են հայ համքարությունների պատմությունն ուսումնասիրող գիտնականների ուշադրությունից։

Փորձենք, ի մի բերելով պահպանված նյութերը, ընդհանուր պատկերացում տալ այդ համքարությունների ու դրանց ներքին կառուցվածքի վերաբերյալ։

Հայտնի է, որ Կամենեց-Պոդոլսկում, Զոլոչևում, Յազլովեցում, Ժվանեցում, Ռաշկովում, Ստուդենիցայում, Մոգիլյով-Պոդոլսկում, Բալտայում, Բարում, Պոդհայցիում, Բերեժանիում և պոդոլյան այլ բնակավայրերում հաստատված հայերը զբաղվել են բազմաթիվ արհեստներով։ Նրանք պարապում

---

[1] Լ. Խաչիկյան, 1280 թվականին Երզնկայում կազմակերպված «Եղբայրությունը» (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1951, № 12). Վ. Գրիգորյան, Արևմտյան Ուկրաինայի հայկական գաղութների «Կտրիճվորաց եղբայրությունների» մասին («Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 2), В. Григорян, К вопросу о «Братствах удальцов» в армянских колониях Западной Украины («Исторические связи и дружба украинского и армянского народов» (сборник материалов второй украинско-армянской научной сессии). Киев, 1965, с. 128—136).

[2] Վ. Գրիգորյան, Յազլովեց քաղաքի հայկական գաղութի «Կտրիճվորաց եղբայրության» կանոնադրությունը (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1973, № 9)։

էին կաշվի մշակմամբ և դրանից զանազան իրերի արտադրությամբ։ Նրանց մեջ շատ էին անուն հանած ոսկերիչները, կային բազմաթիվ բարձրորակ քարգործ վարպետներ ու որմնադիրներ, որոնց կառուցած եկեղեցիների, բնակելի տների ու պաշտպանական ամրությունների մի մասը պահպանվել է մինչև այսօր։ Պոդոլյեի հայերը զբաղվում էին նաև դերձակությամբ, կոշկակարությամբ, ատաղձագործությամբ, պղնձագործությամբ, սայլապանություն էին անում, աշխատում էին որպես վարսավիրներ։ Նրանք նաև հմուտ մսագործներ էին և ոչ միայն մորթում ու մաշկում էին կենդանիներին, այլև նրանց մսից պատրաստում էին զանազան երշիկներ ու ապուխտներ, իսկ ճարպն օգտագործում էին մոմի ու օճառի արտադրության համար։ Հայերը զբաղվում էին նաև ոգելից խմիչքների արտադրությամբ, որոնք վաճառքի էին հանում իրենց խանութներում ու գինետներում։

Լեհական պետության մեջ արհեստավորական ընկերությունները կազմակերպվում էին կրոնական սկզբունքով և այլակրոն ու այլազգի արհեստավորները դուրս էին մնում նրանց համքարություններից (ցեխերից)։ Նրանք հարկադրված էին զանազան իրերի արտադրությամբ զբաղվել առանձին, որ կապված էր մեծամեծ դժվարությունների հետ, կամ էլ ստեղծում էին իրենց համքարությունները։ Պոդոլյեում հաստատված հայերը, լեհերից անկախ, ունեին իրենց համքարությունները, որոնց մասին պահպանված նյութերն իրավունք են տալիս պնդելու, որ դրանք շատ նման էին դեռևս մայր հայրենիքում և ապա գաղթի ճանապարհին զանազան վայրերում ստեղծված համքարություններին։

Պոդոլյեում թե՛ թվով և թե՛ նշանակությամբ, անտարակույս, շատ կարևոր դեր էին խաղում Կամենիցի հայ արհեստավորները։ Սակայն, դժբախտաբար, այդ քաղաքի հայկական արհեստավորական կազմակերպությունների մասին տեղեկությունները շատ քիչ են։ Ուկրաինացի պատմաբան Ե. Սեցինսկին, որը հատուկ աշխատություն է նվիրել Պոդոլյեի համքարությունների պատմությանը, գրում է, թե Կամենիցում համքարություններ ստեղծվել էին շատ վաղուց, բայց դրանց մասին առաջին տեղեկությունները վերաբերում են 1535 թ., երբ քաղաքի ջուլհակներն իրենց ներկայացուցչին ուղարկել էին Լվով՝ այնտեղի ջուլհակների ցեխից խնդրելու ցեխային կանոնադրությունը՝ նրանով ղեկավարվելու համար[3]։ Ըստ Ե. Սեցինսկու, 1578 թ. հարկային ցուցակներում Կամենիցի արհեստավորները բաժանված էին երեք խմբի՝ լեհական համայնք, ուկրաինական համայնք և հայկական համայնք։ Վերջինիս մեջ կոշկակարներից բացի, թվարկվում են հետևյալ արհեստավորները՝ վարսավիրներ, թամբագործներ, ոսկերիչներ և ատաղձագործներ։ «Կարծում ենք,— գրում է Ե. Սեցինսկին,— որ այդ հայկական արհեստավորները լեհերից անկախ ունեին իրենց առանձին կազմակերպությունները[4]։ Այդ կազմակերպությունների մասին, սակայն մեզ առայժմ ոչինչ հայտնի չէ։

---

3 Е. Сецинский. Материалы для истории цехов в Подолии («Труды подольского церковного историко-археологического общества», вып. десятый. Каменец-Подольск, 1904. с. 423).

4 Նույն տեղում, էջ 431։

Պոդոլյեի հայկական հինավուրց գաղութներից մեկում՝ Յազլովեցում 1615 թ. դեկտեմբերի 15-ին լեհ մագնատ Յան Եժի Ռադզիվիլի տված արտոնագրի հիման վրա, հայերն իրավունք էին ստացել հիմնելու իրենց համքարությունները[6]։ Հետագայում, երբ Յազլովեցն արդեն Կոնեցպոլսկիների սեփականությունն էր, հայերը դիմում են նրանց՝ իրենց իրավունքները հաստատելու խնդրանքով։ Այդ արտոնագրից, տրված Բար քաղաքում 1643 թ. դեկտեմբերի 25-ին, երևում է, որ հայերի իրավունքները վերահաստատվել են Յազլովեցկի մի քանի իշխանավորների կողմից՝ այն հաշվով, որ հայերն իրենց շինարարական գործունեությամբ ու սեփական տնտեսությունների բարգավաճմամբ կշարունակեն զարգացնել քաղաքը և, բացի այդ, իրենց մոտ կհրավիրեն նաև ազգականներին ու ծանոթներին[7]։

Պետք է կարծել, որ այդ ժամանակ հաստատվել ու վերահաստատվել են համքարություններ ունենալու՝ հայերի իրավունքները։ Յազլովեցն առևտրաարհեստավորական խոշոր կենտրոն էր և նույն Յան Եժի Ռադզիվիլի հրամանագիրը մեծ արտոնություններ էր ընձեռել արհեստավորներին՝ ազատելով նրանց բոլոր հարկերից։

Ի սկզբանե Յազլովեցում հայերը զբաղվել են անասուններ բտելով և վաճառելով։ Քաղաքում եղել են բազմաթիվ հայ կաշեգործներ, որոնք, հավանաբար, համախմբված են եղել իրենց համքարության մեջ։ Հայտնի է, որ այնտեղ գործել են նաև բազմաթիվ բարգործ վարպետներ։ Դեռևս կանգուն են նրանց կառուցած եկեղեցին ու կից շինությունները։ Նրանք մասնակցել են նաև քաղաքի շուրջ պաշտպանական ամրություններ ու պարիսպներ կառուցելուն։ «Ի ժամանակին յայնմիկ,— գրում է Մ. Բժշկյանը,— նախապատիւքն ի քաղաքին էին Հայք, որք և շինեցին բերդ, կառուցին յոլով շինուածս հրաշակերտս և աղբիւրս՝ հայ արձանագրութեամբ»[8]։

Քաղաքում գործել են նաև հայ ոսկերիչներ, որոնց դերն ու նշանակությունն այնքան մեծ է եղել, որ նրանցից մեկը՝ Պավել Ասլանովիչը, XVIII դ. 10-ական թվականներին նույնիսկ դարձել է քաղաքի բուրգմիստրը[9]։ Յազլովեցյան հայ շինարար վարպետները, ոսկերիչները և մյուս արհեստավորները անտարակույս, ունեցել են իրենց համքարությունները, որոնց վերաբերյալ, սակայն, տեղեկություններ առայժմ չեն հայտնաբերվել։

Հայկական համքարություններ են եղել նաև Զոլոչև քաղաքում[10]։ Այդ քաղաքի հայերին Լեհաստանի թագավոր Յան Սոբիեսկու 1688 թ. հոկտեմբերի 29-ին տված հրամանագրում նշված է, որ հայերին թույլատրվում է ստեղծել «բոլոր արհեստների առանձին համքարություններ», որոնց նկատմամբ հսկողությունն իրականացնելու էր հայկական դատարանի վոյթը՝ ղեկավարը։ Իսկ անմիջականորեն համքարությունները ղեկավարելու էին ամեն տարի

---

5 Յազովեցն այժմ շրջանային ենթակայության բնակավայր է Ուկր. ՍՍՀ Տերնոպոլի մարզի Բուչաչի շրջանում. 1947 թ. վերանվանվել է Յարլունովկա։

6 Սահակ Թանդյան, Լեհահայերի մասին («Արարատ», էջմիածին, 1902, մարտ-ապրիլ, էջ 285)։

7 Նույն տեղում։

8 Մ. Բժշկյան, Ծանապարհորդութիւն ի Լեհաստան, Վենետիկ, 1830, էջ 129։

9 S. Barącz, Pamiątki jazłowieckie, Lwów, 1862, s. 141.

10 Զոլոչևն այժմ մարզային ենթակայության քաղաք է Ուկր. ՍՍՀ Լվովի մարզում։

ընտրվող ցեխմիստրները։ Հայկական արհեստավորական կազմակերպությունները անկախ են եղել քաղաքում գործող լեհական և ուկրաինական համքարություններից։ Քանի որ հայերն ունեին սեփական համքարություններ, նրանց արգելվում էր մտնել լեհական արհեստավորական կազմակերպությունների մեջ։ Հայկական եկեղեցուն համքարությունները պետք է տային որոշակի քանակությամբ մոմ[11]։

Մոգիլյով-Պոդոլսկ քաղաքի[12] հայ կաշեգործների համքարությունը ստեղծվել է այդ գաղութի կազմավորման սկզբնական շրջանում՝ XVIII դ. առաջին տասնամյակներին։ Ըստ ուկրաինացի հետազոտող Կ. Մելնիկի, այդ համքարությունը շատ է նպաստել Մոգիլյով-Պոդոլսկում կաշեգործական արհեստի զարգացմանը[13]։ Համքարության կանոնադրությունը հաստատել են քաղաքային իշխանությունները 1745 թ. մայիսի 14-ին։ Այդ կանոնադրությունը կազմվել է Լվովում և հաստատվել դեռևս 1620 թ.՝ Լեհաստանի թագավոր 3ան Կազիմիրի կողմից։ 125 տարի այն կիրառվում էր լեհահայ զանազան կենտրոններում։ Կանոնադրության բնագիրը (լեհերեն) զետեղված է լեհահայ գիտնական Սադոկ Բարոնչի «Հայոց պատմության ուրվագիծ» գրքում[14]։

Կանոնադրությունը բաղկացած է 11 հոդվածից։ Ըստ առաջին հոդվածի, համքարությունը կոչվել է Գրիգոր Լուսավորչի անունով։ Սա, անշուշտ, ուշագրավ երևույթ է և վկայում է այն հոգևոր կապի մասին, որ գոյություն ուներ Դնեստրի ափերին ստեղծված այդ գաղութի և հայրենի ավանդույթների միջև։

Կանոնադրության մեջ նախ և առաջ հանգամանորեն բացատրվում է նոր աշակերտ ընդունելու կարգը։ Նոր աշակերտին համքարության ավագներին ստարոստաներին, ներկայացնում էր վարպետը։ Նրանց համաձայնությունը ստանալուց հետո աշակերտության թեկնածուն եկեղեցում ս. Գրիգորի խորանի առջև հաղորդվելուց հետո դառնում էր աշակերտ և նրա անունը մտցվում էր եղբայրության անդամների ցուցակը։ Վարպետի մոտ կաշեգործության արհեստը երեք տարի սովորելուց հետո աշակերտը դառնում էր ենթավարպետ։ Այդ ընթացքում նա վարձատրություն չէր ստանում։ Բայց և այնպես սահմանված էր, որ մշակվող կաշիների յուրաքանչյուր կոպայից (կոպան բաղկացած էր 60 կաշիներից) երկու կաշին հասնում էր աշակերտին։ Մեկ տարի առանց վարձատրության վարպետի մոտ աշխատելուց հետո, եղբայրության թույլտվությամբ, ենթավարպետը կարող էր աշխատել ուզած վարպետի մոտ։ Հետո նա համքարությանը ներկայացնելու էր ծննդյան վկայական և տեղեկանք՝ արհեստի բնագավառում ունեցած հաջողությունների վերաբերյալ։ Մուտքի վճարը եղբայրության դրամարկղը մուծելուց և քաղաքացի դառնալուց հետո էլ (եթե նա քաղաքացի չէր) ենթավարպետը դեռևս վարպետ չէր համարվում։ Մեկ տարի և վեց ամիս նա համքարությունում կա-

---

[11] Ł. Charewiczova, Dzieje miasta Złoczowa, Złoczów, 1929, s. 181.

[12] Մոգիլյով-Պոդոլսկն այժմ մարզային ենթակայության քաղաք է Ուկր. ՍՍՀ Վիննիցայի մարզում։

[13] K. M., Путевые очерки Подолии, оттиск из «Киевской старины», Киев, 1885, с. 148.

[14] Sadok Barącz, Rys dziejów ormiańskich, Ternopol, 1869, s. 158—161.

տարում էր, այսպես կոչված, ջահելի դեր, այսինքն՝ օգտագործվում էր օժանդակ աշխատանքներ կատարելու ժամանակ։ Նա դեռ իրավունք չուներ նստել մյուս վարպետների հետ։

Կանոնադրության հինգերորդ հոդվածի համաձայն սաֆյան պատրաստող յուրաքանչյուր վարպետ պետք է ունենար իր արհեստանոցը և դարաղարանը։ Նա պետք է կարողանար պատրաստել զամշ, սաֆյան, կոշիկի տակ, կիսակոշիկներ, փափուշներ, դեղին և կարմիր գույնի երկարաճիտ կոշիկներ և այլն։ Մեկ վարպետն իրավունք չուներ միանգամից գնել քսանից ավելի կաշի։ Այդ մասին նա պետք է տեղյակ պահեր եղբայրությանը և ավելացած կաշիները բաժաներ բոլոր «եղբայրների» միջև։

Կանոնադրությունը համքարության անդամներից պահանջում էր հարգալից վերաբերմունք ունենալ միմյանց նկատմամբ։ Համքարության անդամներն անպայման կպատժվեին, եթե իրար վիրավորեին խոսքով կամ ձեռք բարձրացնեին միմյանց վրա։

Համքարության մեջ չգրանցված անձանց, անկախ կրոնից, ազգությունից ու աստիճանից, արգելվում էր խոշընդոտ հանդիսանալ համքարության անդամներին՝ Մոգիլյով-Պոդոլսկում գնելու այծի կամ ոչխարի կաշի։ Համքարության մեջ շմտնողներն իրավունք չունեին ենթավարպետներ պահել, պատրաստել սաֆյան, դեղին կամ կարմիր երկարաճիտ կոշիկներ։ Հակառակ դեպքում, ամեն ինչ կբռնագրավվեր ու կբաժանվեր քաղաքի տիրոջ և համքարության միջև։

Համքարությունը բավական արտոնյալ վիճակում է եղել և կախում չի ունեցել ո՛չ քաղաքի տիրոջից, ոչ էլ այլ, արդեն հաստատված համքարություններից։ Քաղաքի տերն օգնելու էր կանոնադրության կիրառմանը։

Ղեկավար անձանց՝ ավագների կամ ստարոստաների ընտրություններն անց էին կացվում ամեն տարի՝ ս. Գրիգորի տոնի նախօրյակին։ Ժամասացությունից հետո «եղբայրները» հավաքվելու էին եկեղեցու գավիթը, որտեղ սեղանի վրա դրված էր լինելու համքարության սնդուկը։ Ներկա էր լինելու նաև ծխական քահանան։ Համքարության նախորդ տարվա ավագների հաշվետվությունը լսելուց հետո «եղբայրները» հաստատելու էին նախորդներին կամ քվեարկությամբ ընտրելու էին նոր ավագների։ Քահանան հաստատում էր ընտրությունը և ստորագրում այդ կապակցությամբ կազմված արձանագրությունը։

Համքարությունն ունենալու էր իր անդամների ցուցակները և պատմության, ելքի ու մուտքի մատյանները։ Քահանայի պարտականությունների մեջ էր մտնում այդ մատյանների ստուգումը և հաստատումը։ Եթե նա պակասորդ հայտնաբերեր դրամարկղում, ապա դա հատուցելու էին ստարոստաները։ Սնդուկը և դրամարկղը պահվելու էին մի անվտանգ վայրում կամ ստարոստայի մոտ։ Մի բանալին լինելու էր կրտսեր ստարոստայի, իսկ մյուսը՝ ավագ վարպետի մոտ։ Փաստաթղթերն ու դրամները պահվելու էին սնդուկում։

Համքարությունն իրավունք ուներ իր դրամները գրավով տալու։ Գրավ դրված առարկաները պետք է լինեին ոսկեղեն, արծաթյա իրեր կամ թանկագին քարեր և իրենց արժեքով երկու անգամ գերազանցեին վերցված գումարը։ Դրամարկղում եղած դրամը փոխարինաբար տրվելու էր համքարության անդամներին՝ տարեկան 3 տոկոս ստանալու պայմանով։ Համքարու-

թյունը ոչ մի գոռշ չպետք է տար քաղաքի կարիքների համար, միայն քահանայի կարգադրությամբ այն հոգալու էր եկեղեցու զարդարման ծախսը։ Համքարությունը եկեղեցուն վճարումներ էր կատարելու ժամասացության համար՝ տարեկան չորս անգամ, իսկ երբ եղբայրության նյութական հնարավորություններն ավելանային, հաճախակի էին դառնալու նաև ժամասացությունները։ Համքարության անդամների համար պարտադիր էր բոլոր կարգի եկեղեցական ծիսակատարություններին մասնակցելը։ Նրանք ունենալու էին իրենց մոմերը, որոնցով մասնակցելու էին հոգևոր երթերին ու թաղումներին։

Համքարության անդամների տարեկան անդամավճարը սահմանված էր մեկ ղլոտի։ Նրանք պարտավոր էին այցելել իրենց հիվանդ գործընկերներին, օգնել կարիքավորներին և իրենց ծախսով կատարել չունևոր «եղբայրների» թաղումը։

Ինչպես երևում է, Մոգիլյով-Պոդոլսկի հայ կաշեգործների համքարությունը քաղաքում փաստորեն վայելել է տվյալ արհեստով զբաղվելու մենաշնորհը։

Դնեստր գետի ափին գտնվող Ռաշկով փոքրիկ քաղաքում[15] հայերը համքարություններ ստեղծելու իրավունք էին ստացել լեհ մագնատ Յուզեֆ Լյուբոմիրսկուց՝ 1751 թ. մարտի 29-ին։ Լվովցի Օգսենտ Խոսրովի Նիկոլյան վարդապետը, որն այդ հրամանագիրը ձեռք բերելու համար դիմել էր Յու. Լյուբոմիրսկուն և ապա լեհերենից այն թարգմանել հայերեն՝ կցելով դրան իր կազմած համառոտ բացատրագիրը, տեղեկություններ է հաղորդում նաև Ռաշկովի հայերի համքարական կազմակերպությունների մասին։

Այդ բացատրություններից երևում է, որ Ռաշկովում եղել են մի քանի հայկական համքարական կազմակերպություններ, որոնք կոչվել են «անընով իւրեանց պահապան մէկ սուրբին»[16]։ Օգսենս։ վարդապետը թվարկում է այդ համքարությունները, որոնց կոչում է «պրասդավաներ» (ծագում է լեհերեն «braterstwo»՝ «եղբայրություն» բառից)։ «Պրասդավան քիւրջոց և թէրզնուն, և որոնք ասիով կի բանին, սրբոյ Գայէթանին պահպանութեան անընով լինի։

Պրասդավան սուրուկճոց, կօշքարաց, մաղմանողաց, և խասապչոց, և այլոց ընդ պահպանութեան սրբոյն Գրիգորի Լուսաւորչին»[17]։

Օգսենտ վարդապետի հաղորդած տեղեկությունները հիմք են տալիս նմանություններ գտնելու Ռաշկովի համքարությունների և Մոգիլյով-Պոդոլսկի հայ կաշեգործների համքարության միջև։ Ի միջի այլոց ասենք, որ կաշեգործների կանոնադրությունը կիրառվում էր այն բոլոր վայրերում, որտեղ կային այդօրինակ հայկական համքարություններ և բացառված չէ, որ Ռաշկովի համքարությունների կանոնադրությունները կազմողներն օգտվել են այդ կանոնադրությունից։

Ռաշկովում ևս «պրասդավաներն» ունեցել են իրենց «զանծանակայ սնտկներն, և մէջը պի պահին զիրենց Բրավային քօրայ արդիքուլներն.

---

15 Ռաշկովը (Ռաշկովո) շրջանային ենթակայության բնակավայր է Մոլդավական ՍՍՀ Կամենկայի շրջանում։

16 Մ. Բժշկյան, նշվ. աշխ., էջ 182—183։

17 Նույն տեղում, էջ 182։

րէյնսորներն, աքթաներն, կէյիւրի և խարճի Տաքթարներն, նաղտ ստակն, և գժողովածն ճուրումներուն, կամ ըէհիներն երբ կուտան շահու ստակն»[18]։

Օգսենտ վարդապետի բացատրությունների «Ե. Սահմանից», որը կրում է «Վասն շահու տալոյն զգանձանակին ստակն» վերնագիրը, տեղեկանում ենք, որ դրամը տոկոսով տրվել է ճիշտ նույն պայմաններով, ինչ Մոգիլյով-Պոդոլսկում։ Այստեղ էլ գրավը լինելու էր ազնիվ մետաղներից ու իր արժեքով կրկնակի անգամ գերազանցելու էր պարտք վերցրած գումարը, սակայն չի նշվում, թե քանի՞ տոկոսով էր տրվում պարտքը։ Դրամը ծախսվելու էր եկեղեցու, հոգևորականների ու աղքատների վրա։ Ամեն տարի ընտրվելու էին երկու «Սդարեսդայ Ցէխմիսդրներ, և բիսարն, որ գրէ զամենայն պէտք եղեալսն»։ Սնդուկը լինելու էր մեծ «ցէխմիսդրի» մոտ կամ քահանայի խցում, բանալիներից մեկը պահվելու էր փոքր «ցէխմիսդրի», մյուսը՝ ավագ «եղբորդ մոտ»[19]։

Համքարության մեջ ընդունելությունը, անդամների միմյանց օգնելը, անդամավճար մուծելը, հոգևոր հանդեսներին մասնակցելը լինելու էր ճիշտ այնպես, ինչպես Մոգիլյով-Պոդոլսկի հայ կաշեգործների համքարությունում։

Անհրաժեշտ է նշել, որ դեռ նախքան լեհական տիրապետության տակ գտնված ուկրաինական քաղաքներ գաղթելը, հայերն ունեցել են այդ բնույթի կազմակերպություններ։ Հայտնի է, որ Կաֆայի անկումից հետո մեծ թվով հայեր գաղթեցին զանազան վայրեր, այդ թվում և Պոդոլյեի ու Գալիցիայի հայաշատ կենտրոններ։ Բնականաբար, նոր վայրերում նրանք վերստեղծում էին իրենց կազմակերպությունները։

Յազլովեցի հայերի մասին գիտենք, որ նրանք դաղթել են Կաֆայից։ Ս. Բարոնչը գրում է, թե գաղթելուց հետո հայերը Յազլովեցում «հիմնեցին կաշվի գործարաններ և բուծում էին անասունների ընտիր հոտեր և ձիեր»[20], իսկ 1615 թ., ինչպես նշեցինք, Յան Եժի Ռադզիվիլի տված արտոնագրի հիման վրա հայերն իրավունք ստացան հիմնելու իրենց համքարությունը[21]։

Դա առաջին հերթին վերաբերում էր կաշեգործներին։ Այդ մասնագիտությունն ավանդական էր դարձել հայերի համար, որովհետև Կաֆայում էլ նրանք հայտնի էին որպես կաշվի լավագույն մշակողներ։ Դեռևս XIII դ. սկսած նոտարական արձանագրություններում. 1449 թ. կանոնադրության և հայերեն ձեռագրերի հիշատակարանների մեջ նշված են Կաֆայի մորթեգործ արհեստավորները, որոնք ունեցել են իրենց համքարությունը։ Կաֆայում նրանք նույնիսկ հատուկ փողոց են զբաղեցրել։ Կաշվի մշակումից բացի, նրանք զբաղվել են նաև կոշկակարությամբ[23]։ Ի դեպ, հայկական քաղաքներում գոյություն ունեցած կոշկակարների համքարության վերաբերյալ տեղեկությունը գալիս է 1541 թվականից։ Մաշտոցի անվան Մատենադարանի № 5067 ձեռագրի հիշատակարանում նշված է «սօլկար էսնաֆը»[24]։ Բնական է,

---

18 Նույն տեղում։

19 Նույն տեղում, էջ 182—183։

20 S. Barącz. Rys dziejów ormiańskich, s. 88—89.

21 Նույն տեղում, էջ 89—90։

22 Ա. Մ ի ք ա յ ե լ յ ա ն, Ղրիմի հայկական գաղութի պատմություն, Երևան, 1964, էջ 197։

23 Նույն տեղում, էջ 198։

24 Ա. Ա ր ք ա հ ա մ յ ա ն, Հայ համքարությունները Անդրկովկասի քաղաքներում (18—20-րդ դարի սկիզբը), Երևան, 1971, էջ 28։

որ գաղթելով այլ վայրեր, հայ արհեստավորները շարունակում էին զբաղվել իրենց մասնագիտությամբ։ Ըստ երևույթին, Կաֆայից տեղափոխված հայերը նոր վայրերում պահպանել կամ վերականգնել են իրենց արհեստավորական կազմակերպությունները, ինչպես նաև հոգևոր եղբայրությունները։ Դրա լավագույն վկայություններից է այն փաստը, որ Ղրիմից Դոնի ափերը գաղթած հայերը վերստին ստեղծում են իրենց արհեստավորական կազմակերպություններ։ «Գաղութի առաջացման սկզբնական շրջանում, արտագաղթից ընդամենը յոթ-ութ տարի անց,— գրում է Վ. Բարխուդարյանը,— իրենց արհեստի նշանը կրող առանձին դրոշակներով նոր Նախիջևանում բանանկ համքարությունների առկայության այս պերճախոս փաստը ինքնին հավաստի վկայություն է տակավին Ղրիմում հայ արհեստավորական համքարությունների գոյության»[25]։

Այսպիսով, Ղրիմ գաղթած և ապա պատմական դեպքերի հարկադրմամբ այնտեղից Պոդոլյե ու այլ վայրեր ցրված հայերը, ի թիվս հայրենի այլ ավանդույթների, այնտեղ են տարել նաև իրենց կազմակերպությունները, որոնք, բնականաբար, հարմարվելով նոր պայմաններին, պետք է ենթարկվեին համապատասխան փոփոխությունների։

Պոդոլյեում գոյություն ունեցած հայկական համքարություններն ընդհանուր շատ բան ունեն Անդրկովկասում և նոր Նախիջևանում գործած հայկական արհեստավորական կազմակերպությունների հետ։ XVIII դարից պահպանված «Յաղագս արհեստաւորաց» կանոնագրի, XIX դ. առաջին քառորդից պահպանված «Կանոն ոսկերիչ արհեստաւորաց» ու այլ նյութերի բաղդատումից, որոնք հրապարակված են Վ. Աբրահամյանի գրքում[26], ինչպես և հայ համքարությունների կառուցվածքի վերաբերյալ նոր Նախիջևանի հայոց մագիստրատում պահպանված վավերագրերից ու կանոնագրություններից, որոնք ուսումնասիրել է Վ. Բարխուդարյանը[27], երևում է, որ հայ համքարություններին բնորոշ է եղել ներքին ինքնավարությունը, նրանց անդամների միջև եղած տարաձայնությունները լուծել են եղբայրության ղեկավարները։ Վերջիններիս պաշտոնն ընտրովի էր և նրանք հաշվետու էին համքարության անդամների առջև։ Համքարություններն ունեցել են դրամարկղ, որտեղ հավաքված գումարները գրավի դիմաց կամ տոկոսներով տրվել են եղբայրության անդամներին։ Կազմակերպության միջոցներն օգտագործվել են եկեղեցուն, աղքատներին ու համքարության կարիքավոր անդամներին օգնություն ցույց տալու համար։ Կանոնագրությունները կարգավորել են աշակերտներ պահելու ու նրանց վարպետ դարձնելու խնդիրները։ Ըստ այդ կանոնների, համքարության անդամները պետք է սիրով ու հարգանքով վարվեին միմյանց նկատմամբ, օգնեին հիվանդներին, մասնակցեին մահացած «եղբայրների» թաղմանը։

---

25 Վ. Բարխուդարյան. Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1779—1861 թթ.). Երևան, 1967, էջ 206։

26 Վ. Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 176—180, 200—209։

27 Վ. Բ. Բարխուդարյան, նշվ. աշխ., էջ 211—224, նույնի՝ Նոր Նախիջևանի համքարությունները («Բաներ Երևանի համալսարանի», 1968, № 1, էջ 110—120), նույնի՝ Նոր Նախիջևանի համքարությունների կանոնագրությունները («Պատմա-բանասիրական հանդես», 1975, № 3, էջ 191—210)։

Այս ամենը, ինչպես վերը տեսանք, տարբեր ձևակերպումներով տեղ են գտել նաև պոդոլյան հայ գաղութներում գոյություն ունեցած համքարությունների կանոնադրություններում։ Հետևապես և վերջիններս կարողացել են պահպանել հեռավոր հայրենիքում գոյություն ունեցած արհեստավորական եղբայրությունների ընդհանուր կառուցվածքի շատ տարրեր, բայց ժամանակն ու նոր պայմանները փոփոխություններ են մտցրել դրանց մեջ և ձևական առումով դրանք որոշ նմանություններ են ձեռք բերել նաև Ռեչ Պոսպոլիտայի քաղաքներում գոյություն ունեցած ցեխային կազմակերպությունների հետ։ Համքարությունները, սակայն, շատ պահպանողական կազմակերպություններ էին, նոր պայմաններում նրանց կանոնադրություններում փոխվում էին որոշ բառեր ու տերմիններ, բայց նույնն էին մնում դրանց ներքին կառուցվածքի ու գործունեության բոլոր առանձնահատկությունները։

ЦЕХОВЫЕ ОРГАНИЗАЦИИ В АРМЯНСКИХ КОЛОНИЯХ ПОДОЛИИ

ВАРТАН ГРИГОРЯН

Резюме

Цеховые организации существовали в армянских колониях Каменец-Подольского, Язловца, Золочеве, Могилев-Подольского и Рашкова. Сохранившиеся материалы, прежде всего уставы цеха сафьянников армянской колонии г. Могилев-Подольского и цеховых организаций г. Рашкова, позволяют подробнее ознакомиться с внутренней структурой этих организаций, их целями и деятельностью.

Армянские цеховые организации Подолии сохранили многие элементы общей структуры ремесленных организаций, имевшихся на родине, но время и новые условия внесли свои коррективы, и эти организации формально приобрели некоторое сходство с цеховыми организациями городов Речи Посполитой.